

# Չայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի հարցաշար

2020-2021 ուստարի – 150 րոպե

12-րդ դասարան

1.Ներկայացրու Վասակ Սյունու կերպարը՝ ըստ Եղիշեի և Դերենիկ Դեմիրճյանի: Ո՞ր հեղինակին ես համամիտ:

5 մ.

2.Վերլուծի՛ր Սիլվա Կապուտիկյանի «Երգ երգոց»(Ինձ շատ բան տվեց բախտը աշխարհում...) բանաստեղծությունը: Ուրիշ ո՞ր բանաստեղծն ունի «Երգ երգոց» վերնագրով ստեղծագործություն: Որտեղի՞ց է ծանոթ մեզ այս վերնագիրը:

5 մ.

Ինձ շատ բան տվեց բախտը աշխարհում հարո՛ւստ,

Միայն չտվեց երջանիկ մի սեր.

Չտվեց, որ ես հոգով անդադրում

Դեռ տենչա՛մ, փնտրե՛մ, չգտնե՛մ ես դեռ

Չտվեց, որ միշտ ազնիվ մի կարոտ

Մեղեդու նման թրթռա իմ մեջ

Որ ինձ հետ զարթնի ամեն առավոտ

անհատնում

Ինչ-որ մի տազնապ, անհսի մի տենչ,-

Որ մենակ լուսնի տեսքից հառաչեմ,

Կանչող ծառերի լեզուն հասկանամ,

Որ թախծոտ երգը օդի պես շնչեմ

Որ Վերթերի հետ տառապեմ ու լամ,

Որ իմ մե՛ջ առնեմ աշխարհն՝ անհագուրդ

Ու տամ աշխարհին սիրտ, հոգի ու գանձ

Ապրեմ իմ այս խենթ վատնումով՝

Իմ կորուստներով՝ անսահման գտա՛ծ,-

Չտվե՛ց, որ ես միայն չցվեմ

Խուլ երջանկությամբ՝ անընտել ցավին,

Չլացող աչքի արցունքը տեսնե՛մ ,

Լսեմ խոսքերը՝ չասվա՛ծ տակավին,-

Որ բյուր քույրերիս խռովքն

Չգամ իմ արյա՛մբ, Էությա՛մբ իմ ողջ,

Որ մի էջ՝

հայոց երգի մատյանում

Լցվի հավերժող հառա՛չով կնոջ...

3.Ներկայացրու Ալիսիա Կիրակոսյանի սերը՝ ըստ ներքոգրյալ բանաստեղծության: Չամամի՞տ ես մեծ սիրերգակի հետ:

Սերը գոյության հանճարն է միակ:

Սիրո հակառակը ամենևին էլ չսիրելը չէ,

Մահն է պարզապես...

Սիրահարները

Անմահություն են վերանորոգում:

5 մ.

4.Վերլուծի՛ր Չամո Սահյանի «Չես ասի ոչ մի բառով» բանաստեղծությունը: Կարո՞ղ ես նույնատիպ ուրիշ բանաստեղծություններ հիշել բանաստեղծից:

5 մ.

Չանրապետական հանձնաժողովի նախագահ՝

Ս. Աբազյան